ԱՐՑԱԽԻ ԳԱՎԱՌՆԵՐԸ ԸՍՏ «ԱՇԽԱՐՀԱՑՈՅՑ»-Ի ԵՎ ԴՐԱՆՑ ՏԵՂԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ՀՏԴ 941.(479.25)

Եղիազարյան Վանո
Վանաձորի պետական համալսարան,
Հայոց լեզվի և գրականության ամբիոն,
բանասիրական գիտությունների դոկտոր պրոֆեսոր
vano.exiazaryan@mail.ru

Հակոբյան Լեռնիկ
Վանաձորի պետական համալսարան,
Հայոց լեզվի և գրականության ամբիոն,
Բանասիրական գիտությունների թեկնածու
LernikHakobyan.70@mail.ru

Սույն հոդվածի խնդրո առարկան Արցախի գավառներն են և դրանց աշխարհագրական տեղադրության ճշգրտումը: Հոդվածի նպատակն է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում Արցախ աշխարհի գավառների մասին եղած տեղեկությունները լրացնելն ու հնարավորինս ամբողջացնելը: Հոդվածի արդիականությունը հայագիտության մեջ ճշգրտված տեղեկությունների ներդրումն է, իսկ գործնականում այն կծառայի արցախագիտությանը: Հոդվածում կիրառել ենք պատմական և հերմենևտիկայի մասնագիտական մեթոդները: Հոդվածի գիտական նորույթն Արցախի գավառների թվի հստակեցումն է՝ «Աշխարհացոյց»-ի բնագրի սրբագրմամբ, նաև՝ 12 գավառների տեղորոշման ու «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում ներկայացված տեղեկությունների ճշգրտումը:

Բանալի բառեր՝ Արցախի գավառներ, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, գավառների տեղադրության ճշտում, նոր տեղանուններ:

Ներածություն

Արցախի գավառների և նրանց տեղադրության շուրջ հայագիտության մեջ եղել են ուսումնասիրություններ, սակայն հարցը չունի հստակություն և որոշ հարցեր տակավին մնում են չպարզաբանված:

Ինչպես գրում է Բաբկեն Հարությունյանը «Հայոց Արեւելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացոյց»-ի» հոդվածում, հարցը թեև ուսումնասիրվել է, սա-

---

* Հոդվածը ներկայացվել է 16. 05. 2022:
Տպագրության է երաշխավորել ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.դ. պրոֆեսոր՝ Ֆ. Մովսիսյանը:
21. 05. 2022:
Հոդվածն տպագրության է ընդունվել 7.06.2022:
Հոդվածին կցված քարտեզը կազմել է Լ.Հակոբյանը՝ որպես արցախցի ծանոթ լինելով աշխարհագրությանն ու տեղանքին:

կայն այն «ցայսօր պատկանում է Հայաստանի պատմական աշխարհագրության վիճելի խնդիրների շարքին»[1]

Հնագույն հիշատակությունը Արցախ աշխարհի և նրա 12 գավառների մասին Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ն է, որտեղ թեև հիշատակվել է 12 գավառ ունենալը, սակայն նշվել է 13 անուն. ***«Արցախ յերի կալով Միւնեաց. ունի գաւառս երկոտասան, զՄիւսն Հաբանդ, զՎակունիս, զԲերծոր, զՄեծիրանս, Մեծկուանս, զՀարճղաւնս, զՄուխանս,***

զՊիանս, զՊաձկանս, զՍիսականիս, զԿոտակ, զՔուստիփառէնս, զԿոխտ, յորում լինի քարախունկ. զայս ամենայն Աղուանք ունին հանեալ ի Հայոց»[2]:

Ըստ էության «զՍիսականիս, զԿոտակ» անունների արանքում ստորակետ չպիտի լիներ, քանի որ Սիսական Կոտակը կամ Սիսական Ոստանը մեկ գավառի անուն է, ինչը սրբագրվել է 7-րդ դարի «Աշխարհացոյց»-ում. ***«Արցախ յերի կայ Միւնեաց. գաւառք են ի նմա երկոտասան, զոր Աղուանք ունին. Միւս Հաբանդ, Վակունիք, Բերդաձոր, Մեծկուանք, Մեծիրանք, Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պանծկանք, Սիսական ոստանն, Քուստիփառնէս, Կողթ՝ յորում լինի քարախունկ»***[3]

Ըստ այդմ՝ Արցախի 12 գավառներն են.

1. Մյուս Հաբանդ, Մյուս Խաբանդ
2. Վայկունիք, Վակունիք
3. Բերդաձոր, Բերձոր
4. Մեծիրանք, Մեծ Առանք
5. Մեծկվանք, Մեծկուանք, Մեծ Կուենք, Մեծ Կողմանք
6. Հարճլանք, Հարջլանք
7. Մուխանք
8. Պիանք
9. Պարզկանք, Պաձկանք, Պանծկանք
10. Սիսական Ոստան, Սիսական Կոտակ, Սիսական Քուակք
11. Քուստիփառնես, Փառիսոս
12. Կողթ:

Այն դեպքում, երբ «Աշխարհացոյց»-ում Արցախի գավառները ներկայացված են վերոնշյալ անվանաձևերով, Բագրատ Ուլուբաբյանն ավելացրել է նաև Սոդքը՝ թվարկելով Արցախի հետևյալ գավառները. «1. Մյուս Հաբանդը («Մյուս» էին կոչում Սյունիքի Հաբանդից տարբերելու համար), 2. Վայկունիքը, 3. Բերդաձորը, 4. Մեծ Առանքը, 5. Մեծ Կողմանքը կամ Մեծ Կվենքը, 6. Հարճլանքը, 7. Մուխանքը, 8. Պիանքը, 9. Պարզկանքը, 10. Փառնեսը կամ Փառիսոսը, 11. Կողթը եւ 12. Սոդքը»[4]: Նշենք, որ ըստ «Աշխարհացոյց»-ի Սոտքը Սյունիքի գավառներից է[5], սակայն Բ. Ուլուբաբյանը հիշատակել է այն որպես Արցախի գավառ, ավելին՝ չի նշել Սիսական Ոստան գավառի անունը:

Ավելի վաղ Շահեն Մկրտչյանը գրում է. «Վարչատարածքային առումով Արցախը բաժանված է եղել 12 (իսկ որոշ ժամանակներում՝ 14) գավառի՝ շրջանի: Ահա

---

[1]Հարությունյան Բ., Հայոց Արեւելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 59:
[2] Մատենագիրք հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2001:
[3] Մատենագիրք հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2001:
[4] Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 10:
[5] Նույն տեղում, էջ 2151 ,2172 ,2188:

դրանք. **Մյուս Հաբանդ (Սիսական-ի-Ոստակ), Հարճլանք-Վարդանակերտ, Մուխանք, Պարզկանք, Պիանք, Մեծ Իրանք կամ Մեծ Առանք, Վայկունիք կամ Ծառ, Բերդաձոր, Կողթ, Փառնես, Քուստի և Մեծ Կվենք»[1]:**

Նկատենք, որ գավառների այս թվարկումը ևս հեռացել է «Աշխարհացոյց»-ից, մասնավորապես՝ Սիսական-ի-Ոստակը Մյուս Հաբանդի հետ նույնացնելն այն դեպքում, երբ «Աշխարհացոյց»-ում դա հստակ տարբերակված է, տեղին չէ: Թերևս այդ պատճառով էլ 12 գավառը լրացվել է Փառնես և Քուստի անվանումների տարանջատումով, մինչդեռ դա նույն՝ Քուստիփառնես գավառն է:

Բոլորովին այլ՝ թվով 15 գավառ է հիշատակում Սամվել Կարապետյանը՝ առանց նշելու իր աղբյուրը. «է դարում ստեղծված Աշխարհացույցի համաձայն՝ Արցախն ուներ 15 գավառ՝ Մեծ Կվենք, Քուստ-ի Փառնես, Կողթ, Աղվե, Տռի, Բերդաձոր, Վայկունիք, Մեծ Առանք, Ռոտ-ի Պազկան, Պիանք, Պազկանք, Մուխանք, Մյուս Հաբանդ, Հարճլանք և Սիսական-ի Ոստան»[2]: Իրականում այս շարքում հիշատակված Աղվե, Տռի, Ռոտ-ի Պազկան գավառները Արցախ աշխարհի գավառները չէին, այլ՝ Ուտիքի:

Ուշագրավ է նաև Մակար Բարխուդարյանցի մոտեցումը, որ «Գարգարացւոց» բնակատեղին սկզբում կոչվել է «Գարգար, հետզհետէ ընդունում է Արցախ, Փոքր Սյունիք, Խաչենք, Սեաւ այգի և Ղարաբաղ անունները»[3], իսկ Արցախի գավառները բաժանում է երեք խմբի՝ Դաշտային կամ Ստորին, Լեռնային կամ Միջին Արցախ և Հարավային կամ Վերին գավառներ: Հետաքրքիր է, որ Մ. Բարխուդարյանցը հիշատակում է Արցախի 24 գավառ՝ սրանց մեջ ներառելով նաև Ուտիքի գավառները, ինչն ընդունելի չէ:

Ըստ Մակար Բարխուդարյանցի՝ **Դաշտային կամ Ստորին գավառներից** են Պիանքը,

Մուխանքը, Կողթը: **Լեռնային կամ Միջին Արցախի գավառներից** են Պազկանքը, Մյուս Հաբանդը, Մեծիրանքը, Սիսական Ոստակը[4], Մեծկողմանքը, Քուստիփառնեսը: **Հարավային կամ Վերին գավառներն** են Բերդաձորը, Հարճլանքը, Վայկունիքը, Սիսական-Ոստանը:

Խնդիրը պատմագիտական և պատմաաշխարհագրական գիտական հայեցակարգերով քննել են Սուրեն Երեմյանն ու Բաբկեն Հարությունյանը, որոնց կանդրադառնանք առանձին գավառների տեղադրության հարցի քննության մեջ:

Արցախի գավառները և դրանց տեղադրությունը

Եթե փորձենք համակարգել Արցախի 12 գավառներն՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, ապա կստանանք հետևյալ պատկերը.

---

[1] Մկրտչյան Շ., Արցախ, պատմամշակութային համառոտ ակնարկ, Երևան, 1991:

[2] Կարապետյան Ս., Արցախ, քարտեզագիրք, Երևան, 2016, էջ 1:

[3] Բարխուդարեանց Մ., Արցախ էջ 26:

[4] Այս անունով գավառ Արցախում չի հիշատակել «Աշխարհացոյց»-ը: «Հայաստանի և հարակից շրջանի տեղանունների բառարան»-ում այն նույնացվում է Ռոտստակ գավառակի հետ: Իսկ Բ. Հարությունյանն այն նույնացնում է Սիսական Ոստանի հետ:

1. Մյուս Հաբանդ գավառը տարածվում է Կարկառ գետի աջափնյակից մինչև Դիզափայտի լեռները և Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի դաշտի արևմտյան սահմանը՝ ընդգրկելով Հադրութի և Մարտունու շրջանների մի մասը[1]:

Գավառը Հաբանդ անունով հիշատակել է Փավստոսը. ***«Եւ այսպէս սպանին զառաքինի քարոզն Քրիստոսի զմանուկն Գրիգորիս: Եւ ապա բարձին զնա որք ընդ նմա երթեալ էին ի գաւառէն Հաբանդայ, եւ բերին ի գաւառն իւրեանց ի կողմանս Աղուանից ի սահմանս Հայոց ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարազ:[2]***

«Եվ այսպես սպանեցին Քրիստոսի առաքինի քարոզողին՝ մանուկ Գրիգորիսին: Ապա այն մարդիկ, որոնք Հաբանդ գավառից գնացել էին նրա հետ՝ վերցրին նրա մարմինը և բերին իրենց գավառը Հաբանդ, Աղվանից կողմերում Հայաստանի սահմանում, Ամարազ կոչված գյուղը»:

Նույն բանը հիշատակում է նաև Մովսես Խորենացին, սակայն Հաբանդ գավառի փոխարեն նշում է Փոքր Սյունիք. «***Իսկ ի հասանել համբաւոյ վախճանին Տրդատայ, ի դաւելոյ նորին Սանատրկոյ եւ այլոց ոմանց հանապազաստուտ արանց Աղուանից՝ սպանին զերանելին, ընթադրեալ ձիովք, բարբարոսքն ի Կատնեան դաշտին, մերձ ի Կասբիականն կոչեցեալ ծով:***

Զոր բարձեալ սարկաւագաց նորին, բերելով ի փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի»:

«Իսկ երբ Տրդատի վախճանվելու լուրը հասավ, բարբարոսները նույն Սանատրուկի և ուրիշ մի քանի միշտ սուտ խոսող աղվանների դավերով, երանելի Գրիգորիսին սպանեցին Կատնյան դաշտում, Կասբիական կոչված ծովի մոտ, ձիերի ոտնատակ տալով:

Նրա սարկավագները նրա մարմինը բերին Փոքր Սյունիք, թաղեցին Ամարաս ավանում[3]»:

Ուշագրավ է, որ հենց Մյուս Հաբանդ գավառում է Ամարասը, ինչի մասին հստակ հիշատակում է Մովսես Կաղանկատվացին. ***«յԱմարաս գիւղաքաղաքն, որ էր ի գաւառին Հաբանդայ».[4]*** *«Ամարաս գյուղաքաղաքը, որ գտնվում էր Հաբանդ գավառում[5]*: Պատմության շարահարության մեջ Մովսես Դասխուրանցին նույն գավառն անվանում է Հաբանդ-Ամարաս:[6]

Ըստ Մեսրոպ Վայոցձորեցու Գահնամակի՝ Արշակունի թագավորի խնճույքի սեղանին՝ 139-րդ բարձին բազմելու իրավունքը Խաղբյան ազնվական տոհմինն է: Խաղբյանները հենց Հաբանդ գավառի տերերն էին, ովքեր Արցախի Առանշահիկ նախարարական տանից էին, որոնցից ծագել էին Խաղբակյանները, որոնց ժառանգները Պռոշյան իշխաններն էին[7]:

---

[1] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, Երևան, 1991, էջ 844:

[2] Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Ա, գ:

[3] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Գ, գ:

[4] Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, Երևան, 2011 էջ 72:

[5] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1969, էջ 29:

[6] Նույն տեղում, էջ 256:

[7] Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Վանո Եղիազարյանի, 2015, էջ 165:

Ղ. Ալիշանը Մյուս Հաբանդ գավառը սահմանակից է համարել Սյունիքի Հաբանդ գավառին. «Մյուս Հաբանդ, այսինքն՝ տարբեր Սյունիքում գտնվածից. սկսվում է նրա ելքից եւ տարածվում է Մեծիրանքի հարավում»[1], ապա այն անվանել է Ամարաս և Ասկերան[2]**:**

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Մյուս Հաբանդ գավառը Լեռնային կամ Միջին Արցախի գավառներից է, որն «ընկած է Ղուրու չայի ձախ և Գարգար գետակի աջ ափերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի գագաթնագծի և դաշտաբերանի մէջ, ստացած է Միւս Հաբանդ կամ Հաբանդ-Ամարաս, Վարանդայ, այժմ ևս Վարանդայ անունները»[3]**:**

Ս. Երեմյանը փորձել է Մյուս Հաբանդ գավառը նույնացնել Սիսական ի Ոստան կամ Սիսական ի Կոտակ գավառի հետ[4]**,** ինչն ընդունելի չէ: Բ. Հարությունյանը իրավացիորեն հերքել է այդ տեսակետը, և միաժամանակ Մյուս Հաբանդը տեղադրել է «Սյունիքի Հաբանդ գավառի հարևանությամբ՝ տարածելով այն մինչև Ամարասի կողմերը[5]» **(**այս կարծիքին է նաև Ն. Ադոնցը)[6], ինչն ևս ընդունելի չէ մեզ համար, քանի որ Սյունիքի Հաբանդ գավառին սահմանակից է Բերձոր գավառն, որից անդին նոր միայն Մյուս Հաբանդ գավառն է:

Ըստ Հ. Ոսկյանցի Մյուս Հաբանդ գավառում են գտնվում Ամարասի վանքը[7] Ավետարանոցի Կուսանաց անապատը Շեխերի վանքն և այլն: Գավառի կենտրոնը եղել է Ամարաս ավանը՝ համանուն գետակի ափին:

Այսպիսով՝ Մյուս Հաբանդ գավառը սահմանակից է արևմուտքից՝ Բերձորին, հարավից՝ Պազկանքին, Հարճլանքին, արևելքից՝ Մուխանքին, հյուսիսից՝ Մեծառանքին, նրա սահմանները տարածվում են Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի դաշտի արևմտյան սահմանը՝ մինչև Ամարաս և Կարկառ գետի ողջ աջափնյակը՝ մինչև Ակնա քաղաք:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Մեծ Թաղլար, Ազոխ, Դրախտիկ, Շեխեր, Ավետարանոց, Սղնախ, Թաղավարդ, Կարմիր շուկա, Հերհեր, Մաճկալաշեն, Սոս, Քարահունջ, Քերթ, Հացի, Նախիջևանիկ, Շոշ, Դաշուշեն գյուղերը և այլն[8]:

2. Վայկունիքը Թարթառ գետի վերին հոսանքի շրջանն է, որը հետագայում անվանվել է նաև Ծար գավառ. այն հայտնի է իր բնական տաք ջրերով՝ ջերմուկներով և անվանվել է «Բաղանիք արքունականք» կամ Վայքունիք Ձերմուկ[9]:

Մովսես Խորենացին բացատրել է գավառի անվան ծագումը. ***«Քանզի էր լուեալ եւ համբաւ, թէ Վայկուն ոմն անուն յեղուզակ խռովէր զերկիրն Հայոց, զլեառն ամուր կալեալ, որ մինչեւ ցայժմ յանուն յեղուզակին կոչին Վայկունիք»*** | *«Որովհետև (Տիգրա-*

---

[1] Ալիշան Ղ.,Արցախ-Երևան, 1991, էջ 92:
[2] Նույն տեղում, էջ 147:
[3] Բարխուդարեանց Մ.,Արցախ էջ 21:
[4] Տե՛ս Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան 1961, էջ 70:
[5] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 76:
[6] Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում,Երևան, 1987, էջ 281:
[7] Տե՛ս Ոսկեան Հ., Արցախի վանքերը, էջ 25-10:
[8]Հիշատակված գյուղերից Մեծ Թաղլարը, Ազոխը, Դրախտիկը, Շեխերը,Ավետարանոցը, Սղնախը, հանձնվել են Ադրբեջանին, իսկ Թաղավարդը հանձնվել է մասամբ:
[9]Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.4, Երևան, 1998, էջ 743:

նը) լսել էր, թե Վայկուն անունով մի ելուզակ վրդովում է Հայոց աշխարհը, գրավելով այն ամուր լեռը, որ մինչև այսօր էլ այդ ելուզակի անունով կոչվում է Վայկունիք»[1]*:*

Մովսես Դասխուրանցին հիշատակել է Վերին Վայկունիք գավառը[2] և Վայկունիք գյուղը. ***«Սա Ատրներսէի շինէ զբերդն Հանդու, եւ զապարանս իւր եդեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական[3]»*** *«Այս Ատրներսեհը շինում է Հանդի բերդը և ապարանք է կառուցում Վայկունիք գյուղում, որտեղ կա արքունական բաղանիք»*[4]:

Ղ. Ալիշանը գավառը տեղադրում է Թարթառի ակունքերի մոտ[5] և հաստատում, որ այս գավառում է գտնվում Հանդաբերդը[6], որ նույն Լևոնաբերդն է:

Ըստ Ղ. Ալիշանի՝ Վայկունիքը «սահմանակից է Սյունիքին, արեւմուտքից՝ Սոդք գավառին, որից անջատվում է արցախական Թարթառի եւ Գեղամա ծովի ավազանների բարձր լեռների անջրպետով, հարավից՝ Հաբանդով կամ այժմյան Զանգեզուրով, իսկ սահմանի ելքից՝ Արցախի Չլաբերդ գավառով, հյուսիսից՝ նեղ Քունկուր լեռով, որտեղ վերջանում է Այրում գավառը»[7]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Հարճլանք և Ծար գավառների միջև ընկած հատվածն անվանվել է Վակունիք, Վայկունիք, Վերին Վայկունիք[8]:

Մ. Բարխուդարյանցը նաև նշել է, որ Հագարի գետը սկիզբ է առնում Վայկունիք գավառի հարավահայաց լանջերից, որն ավելի է հեշտացնում գավառի տեղորոշման հարցը[9]:

Գավառի կենտրոնը Վակունիս գյուղն է, որը գտնվել է հանքային ջրերի ավազանում:

Վայկունիքի տեղորոշման հարցում ուսումնասիրողները հիմնականում համերաշխ են[10]:

Այսպիսով՝ Վայկունիքը Թարթառի վերին հոսանքի աջափնյակն է, որին սահմանակից են արևմուտքում՝ Սյունիքի Աղահեջք ու Սոթք գավառները, հյուսիսում՝ Կողթը և Մեծկողմանքը, արևելքում՝ Մեծիրանքը, հարավ-արևելքում՝ Բերձորը:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Քարավաճառ քաղաքը, Ծարը, Ջերմաջուրը, Զուարը և այլն[11]:

3. Բերդաձորը կամ Բերձորը, որ այսօր էլ նույն անվանումն ունի, տարածվում է Արաքս և Աղավնո գետերի միջև՝ Քիրս և Դիզափայտ լեռների հարավային լանջերից մինչև Սյունիքի սահմանները՝ ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի, ուր սխալմամբ նույնացվել է Զաբրայիլի շրջանին, ապա՝ անորոշ

---

[1] Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Բ, ժդ:
[2] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 256:
[3] Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 419:
[4] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 266:
[5] Տե՛ս Ալիշան Ղ., Արցախ, էջ 92:
[6] Տե՛ս Ալիշան Ղ. Տեղեկագիր Հայոց Մեծաց, էջ 88:
[7] Ալիշան Ղ., Արցախ, էջ 95:
[8] Տե՛ս Բարխուդարեանց Մ., Արցախ էջ 26:
[9] Նույն տեղում, էջ 5:
[10] Տե՛ս Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 82, նաև Հարությունյան Բ.,նշվ. աշխ.,էջ 76;
[11] Գավառն ամբողջությամբ հանձնվել է Ադրբեջանին

հղմամբ նույնացվել նաև Վերին Խաչենին[1]:

Մովսես Կաղանկատվացին գավառը հիշատակում է Բերձոր անվանաձևով. ***«կոտորեցին զԲերձոր գաւառ եւ զաւանսն զՈւռեաց՝ զԿառնակաշ, զՀակարի եւ զՏափատ»***[2] *«կոտորեցին Բերձոր գավառն ու Ուռիքի ավանները՝ Կառնակաշը, Հակարին և Տափատը»*[3]:

Ուռիքի ավանները[4], Հակարի գյուղը, Կառնակաշն ուղղակիորեն հաստատում են, որ Բերձոր գավառը Հագարի գետի միջին հոսանքում է, ոչ թե Թարթառի վտակ Թութղուի ավազանում, ինչպես կարծում են Ս. Երեմյանը և Բ. Հարությունյանը: Հետևելով Ղ. Ինճիճյանին, թե «Բերդաձորն ընդամենը վրիպակ է»[5] ՝ Բ. Հարությունյանը որպես գավառի անուն ճիշտ է համարում Բերձորը: Սակայն Բ. Հարությունյանը հետևելով Ս. Երեմյանին՝ Բերձոր գավառը տեղադրում է «Վայկունիքից արևելք՝ Թարթառ գետի վտակ *Թութղուի* ավազանում»[6], ինչը ևս մեզ համար անհամոզիչ է և անընդունելի:

Անընդունելի է նաև Ղ. Ալիշանի տեղադրությունը. «**Բերդ ձոր** կամ **Բերդաձոր**, որն ընկնում է Կողթից հարավ, Գանձակ եւ Կուրակ գետերի ձորագլուխներում, որը նույնպես Ուտիքում է տեղադրվում»[7]: Ապա Ղ. Ալիշանը փորձում է ավելի մանրամասնել. «Կուրանի ձորահովտի արեւմտյան կողմը՝ Կուրակի պատսպարանը, որը կազմում է Մռավ լեռան արեւելյան կողմը կամ Այրում եւ Չլաբերդ գավառների անջրպետը, իմ կարծիքով, հին **Բերդաձոր** գավառն է»[8]:

Մ. Բարխուդարյանցն այն համարում է Արցախի Հարավային կամ Վերին գավառներից՝ հստակ տեղորոշելով. «Գավառն, որ ընկած է Պազկանց գաւառի, Երասխ և Հակարի գետերի, Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի հարաւահայեաց լանջերի մէջ, ստացած է Բերդաձոր, Բերդձոր, Բելուկան, Ղալաղշլաղի ձոր, Ղարադարասի անունները»[9]: Մ. Բարխուդարյանցը նաև նշում է, որ Հագարի գետն իր ձախ կողմից ընդունում է «Յարարի ջուր և Ղոգլու վտակները» Բերդաձոր գավառից[10], որն ավելի է որոշակիացնում գավառի տեղորոշման խնդիրը:

«Յարարի ջուր»-ը Հագարի գետի ձախ օժանդակն է՝ անվանված նաև Հարար, մինչդեռ «Ղոգլու» վտակի մասին տեղանունների բառարանում տեղեկություն չկա. Ղոգլու վտակը միանում է Հագար գետին մինչև Հարար օժանդակի միանալը՝ այժմյան Բերձոր քաղաքից դեպի Հարար ընկած հատվածում՝ սկիզբ առնելով Սուարասը գյուղի շրջակա լեռներից:

---

[1] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, Երևան, 1986, էջ 665:

[2] Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 404:

[3] Ղ. Ալիշանը նշել է, որ չգիտի այս գավառների տեղը: Սրանք Բերձոր գավառում են.Կառնակաշն այժմ գյուղատեղի է և բերդ Հարար գետի ափին, իսկ Ուռեկանն ու Հակարին գյուղեր են Հագարի գետի ափին:

[4] Ինճիճեան Ղ., Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 105:

[5] Նույն տեղում, 103:

[6] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 76:

[7] Ղ. Ալիշան, Արցախ, էջ 92:

[8] Նույն տեղում, էջ 101:

[9] Բարխուդարեանց Մ., Արցախ էջ 25:

[10] Նույն տեղում, էջ 5:

Ստացվում է, որ Բերձոր գավառը Հագարի գետի միջին հոսանքի ձախափնյա հատվածն է: Գավառի կենտրոնն է եղել Բերդաձորը կամ Բերձորը:

Այսպիսով՝ Բերձոր գավառի սահմանները տարածվում են Հագարի գետի միջին հոսանքի ձախափնյա հատվածում՝ մինչև Քիրսի լեռնագագաթ: Գավառը արևմուտքում Հագարի գետով սահմանազատվում է Սյունիքի Հաբանդ գավառից, սահմանակից է արևելքում՝ Մյուս Հաբանդին ու Պազկանքին, հարավում՝ Սիսական Ոստանին, հյուսիսում՝ Վայկունիքին ու Մեծիրանքին:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Բերձոր քաղաքը, Աղավնո, Լիսագոր, Քիրսավան, Հարար, Քարինգ, Սուարասը, Խաչգետիկ, Աղավնատուն, Ուռեկան, Վուրգավան, Հակարի, Բերդաձորի չորս գյուղերը՝ Տասը վերստ, Կանաչ թալա, Մեծ շեն, Հին շեն և այլն:

4. Մեծիրանքն անվանվել է նաև Մեծ Առանք, որը Թարթառի միջին հովտում է, տարածվում էր Խաչենագետի վերին հոսանքի շրջանում՝ Կարկառ գետից մինչև Թարթառ և Քիրսից մինչև Մարտակերտի հարթավայրերի եզրերը, որն անվանվել է նաև Ներքին Խաչեն[1]:

Մովսես Կաղանկատվացին մի քանի անգամ հիշատակում է գավառը, որին *«Մեծիրանցն կոչեն»*[2]:

Մովսես Դասխուրանցին մի դեպք է հիշատակում. ***«Յայսմ ամի անչափութիւն անձրևաց եղեալ յանկարծազեղ ի Մեծիրանց գաւառի եւ հասեալ գնացք հեղեղին ի Դաստակերտ գիւղ»*** *«Այս նույն տարին անձրևների շատությունը Մեծիրանք գավառում տեղատարափ է դառնում և հեղեղի հոսանքը հասնում է Դաստակերտ գյուղը»*[3]:

Գյուղի մասին Ալիշանը գրում է. «Չղախից հարավ ընկած է մեկ ձորահովիտ եւս՝ Թարթառ եւ Խաչեն գետերի միջեւ. դա **Գապարտն** է կամ **Ղաբարթուն**, որի արեւելյան կողմում էլ համանուն գյուղն է, իսկ արեւմտյան կողմում՝ **Գազանճլը** եւ **Քելանին**: Խաչենագետի հովտում, վիճակի հարավարեւելյան ծայրում, գետի աջ կողմում, մի բարձրավանդակի վրա գտնվում է **Բարուխ** գյուղը, իսկ նրա հարավում՝ **Տաշ-պաշը**, դրանից ավելի վերեւ, արեւմտյան կողմում՝ **Շալվան**, սրա հյուսիս-արեւմուտքում, գետի ձախ կողմում՝ **Ախմաք** գյուղը. սրա եւ վերոհիշյալի միջեւ գետերի միացման տեղն է, եւ այնտեղ, նրա անկյուններից մեկում կարելի է հանդիպել **Դաստակերտ** գյուղին, որ հեղեղվեց հազար տարի առաջ: Հասան-Ջալալյանը Արցախի արձանագրությունների ժողովածուներում այդ գյուղը կոչում է **Տաստակեր**, որտեղի եկեղեցում էլ ընդօրինակված է մի արձանագրություն, ըստ որի այն կառուցվել է Սարգիս եպիսկոպոսի կողմից, 1281 թ. «ՉԼ թվին Աստծու կամքով, Արղունի իշխանությամբ տեր Ստեփանոսի հայրապետության ժամանակ, Փախրատինի որդիներ Իվանի եւ Սատրատինի ամիրայության օրոք, ես՝ Տեր Սարգիսս, կառուցեցի ժամատունը, զուգեցի գավազանները, ավետարանները, Ստողոգինը, Եսային: Ովքեր աղոթում են, թող ողորմությամբ հիշեն հանուն Քրիստոսի»[4]:

Դաստակերտ գյուղը գտնվել է այժմյան Մարտակերտի շրջանում:

Մովսես Դասխուրանցին հիշատակում է նաև Շիկաքարը՝ որպես Մեծիրանքի

---

[1]Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ.,Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, էջ 769:

[2] Նույն տեղում, էջ 262:

[3] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 261:

[4] Ղ. Ալիշան, Արցախ, էջ 111:

տեղանուն. ***«ի Մեծիրանց սահմանի ամրացեալք ի տեղւոջն, որ կոչի Շիկաքար»*** *«ամրացան Մեծիրանքի սահմանում մի տեղ, որ կոչվում է Շիկաքար»*[1]: Խոսքը հավանաբար Շիկաքարի բերդի մասին է, որը գտնվում է Խաչեն գավառում՝ այժմյան Ասկերանի շրջանում՝ Խաչեն գետի աջ կողմում, որի վրա է գտնվում Քարագլուխ բերդը[2]:

Խաչեն գավառի արևմտյան մասում է գտնվել Խոխանաբերդը[3]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ այս գավառն «ընկած է Գարգառ գետակի ձախ և Թարթառ գետի աջ ափերի, դաշտաբերանի և Քիրս լեռնաշղթայի շարունակութեան գագաթագծի մէջ, ստացած է Մեծ-իրանք, Մեծարանք, Ներքին-Խաչեն, այժմ Խաչեն անունները»[4]:

Ըստ Մեսրոպյան Գահնամակի՝ Արշակունի թագավորի խնճույքի սեղանին՝ 138-րդ բարձին բազմելու պատիվը Խաչյան ազնվական տան իշխանինն է, որ Խաչեն (Մեծիրանք, Մեծ Առանք) գավառի իշխանն է[5]:

Մեծիրանք գավառում են գտնվում Գանձասարի վանքը[6], Կիչանի անապատը[7] և այլն:

Բ. Հարությունյանը, հետևելով Մովսես Կաղանկատվացուն, գրում է, որ այս գավառում են եղել «Չղախական հովիտը, Շիկաքար բնակավայրը, Դաստակերտը»:

Մեծիրանք գավառի տեղադրության շուրջ ուսումնասիրողները հիմնականում համերաշխ են:

Գավառի կենտրոնը եղել է Գանձասարը:

Այսպիսով՝ Մեծիրանք գավառի սահմանները տարածվում են Թարթառ գետի միջին հովտում՝ աջափնյակում, Խաչենագետի վերին հոսանքի շրջանում՝ Կարկառ գետից մինչև Թարթառ և Քիրսից մինչև Մարտակերտի հարթավայրերի եզրերը: Գավառը սահմանակից է արևելքում՝ Ուտիք նահանգին ու Մյուս Հաբանդ գավառին, հարավում՝ Բերձորին ու Մյուս Հաբանդին, արևմուտքում՝ Վայկունիքին, հյուսիսում՝ Մեծկողմանքին:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Շուշի[8], Ստեփանակերտ, Ասկերան, Մարտակերտ քաղաքները, Իվանյան ավանը (Խոջալու), Չլդրան, Վանք, Դրմբոն, Խաչեն, Պատարա, Խնածախ, Այգեստան, Խանաբադ, Խրամորթ գյուղերը և այլն:

5. Մեծկուանք գավառը Թարթառ գետի վերին հոսանքի ավազանում դեպի Մռավի լեռնաշղթան ընկած հատվածն է՝ Թարթառի հովիտը, որ անվանվել է նաև Մեծկ-

---

[1] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 255:

[2] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.5, էջ 110:

[3] Տե՛ս Հակոբյան Ա.,Խաչէն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ.-ԺԳ դարերում, Հանդէս Ամսօրեայ, 2010, թիվ 1-12, էջ 71:

[4] Բարխուդարեանց Մ., Արցախ էջ 24:

[5]Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Վանո Եղիազարյանի, 2015, էջ 165:

[6] Տես Ոսկեան Հ., Արցախի վանքերը, էջ 52-74:

[7] Նուն տեղում, էջ 78:

[8] Շուշին դավադրաբար հանձնվել է Ադրբեջանին:

վենք, Մեծկողմանք և այլն[1]**:**

Մովսես Կաղանկատվացին գրում է. ***«յՈստակ գաւառն Մեծ Կողմանց, ի Չղախեան հովիտն յասպարիսածեւ դաշտակն առ ափն Տրտուական գետոյն, որ է վիճակին Մեծիրանց»***[2] *«Մեծկողմանքի Ոստակ գավառը՝ Չղախյան հովիտը, Ասպարիսածև դաշտակը Տրտու գետի ափին, որը գտնվում է Մեծիրանքի վիճակում»*[3]:

Խոսքն այստեղ Մեծիրանքի վիճակի՝ եպիսկոպոսության մասին է, որի տարբեր հոգևորականների անուններ հանդիպում են պատմության էջերում:

Մեկ այլ տեղ կրկին խոսք է գնում գավառի մասին, որն այս անգամ անվանվում է Մեծ Կվյանք. **«ի խորախոխում, անտառայար եւ ի մայրաստանիկ աշխարհն Արցախայ՝ գաւառն Մեծ Կուենից: Եւ ի կիրճս ճանապարհին երկաջոկեալ գունդն յերկուս բաժանելով՝ նստէին գուպարս յայնմ տեղւոջ, որում Աստեղն կոչեն բլուր՝ ի հիւսիսոյ *կողմանն. եւ գունդն երկրորդ յայնկոյս Տրտուական գետոյն, ի հարաւական կողմանն ի մայրոլորտ հովտի պուրակի բնակէին Չղախն անուանեցելոյ»***[4] *«խորաձորերով հարուստ, անտառախիտ ու անտառներով առատ Արցախ երկիրը՝ Մեծ Կվյանք գավառը: Ճանապարհի կիրճերում խումբը երկու մասի բաժանվեց. առաջին մասը խմբով միասին նստեց այն տեղը, որ կոչում են Աստղաբլուր, այսինքն՝ հյուսիսային կողմում, իսկ երկրորդ մասը բանակեց Տրտու գետի այն կողմը, անտառապատ հովտի հարավային մասում՝ Չղախ անվանված տեղում»*[5]:

Հիշատակված Աստղաբլուրը գտնվում է Հաթերքում՝ Թարթառ գետի վերին հոսանքի ձախ ափին, որի մասին պահպանվել է նաև ժողովրդական ավանդություն[6]:

Մեկ ուրիշ տեղ Կաղանկատվացին այլ վկայություն է թողել այս գավառի տեղորոշման մասին. ***«ի վերնակողմն գաւառն Մեծ Կուենից՝ ի բարձրաւանդակ լեառնն՝ ի տեղի մենաստանին իւրոյ ի Գլխոյ վանս»***[7] *«Մեծ Կվյանքի վերնակողմ գավառը՝ բարձր լեռը՝ իր մենաստանի վայրը՝ Գլխովանքը»*[8]: Գլխովանքը նույն Հոռեկա վանքն է, որի մասին հիշատակություն ունի նաև Վարդան Արևելցին: Գլխովանքը գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Թալիշ գյուղի մոտ:

Ղ. Ալիշանն այն համարում է Չլաբերդը, որ Զրաբերդն է. «**Մեծկունիք** կամ **Մեծունիք** կամ **Մեծ Կողմանք**. Թարթառի հյուսիսային կամ ձախ կողմում է, Չլաբերդում»[9], քիչ հետո շարունակում. **«Մեծ Կողմանք** գավառի մի մասն է, որի սահմանը Տրտուի հյուսիսային կամ ձախակողմյան ափերն են, թերեւս մի նեղ շերտով այն կողմն անցած, հարավայինը՝ Մեծիրանքը, որը հետագայի բուն Խաչենն է, այսինքն՝ Վայկունիքի արեւելյան եւ Թարթառի հարավային կողմը»[10]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ այս գավառն «ընկած է Մռաւ լեռնաշղթայի դաշտաբերանի, Թղրի և Թարթառ ջրերի ձախ և Կուրակ գետակի աջ ափերի մէջ, ստացած է

---

[1] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, էջ 772:
[2] Մատենագիրք հայոց, հտ.ԺԵ, էջ 264:
[3] Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղվանից աշխարհի», էջ 160:
[4] Մատենագիրք հայոց, հտ.ԺԵ, էջ 140:
[5] Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղվանից աշխարհի», էջ 73:
[6] Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969, էջ 16:
[7] Մատենագիրք հայոց, հտ.ԺԵ, էջ 273:
[8] Մովսես Կաղանկատվացի, «Պատմություն Աղվանից աշխարհի», էջ 166:
[9] Ալիշան Ղ., «Արցախ», էջ 92:
[10] Նույն տեղում, էջ 111:

Մեծ-կողմանք, Մեծկուանք, Չարաբերդ, Թալիշ, Կիւիստան, Զրաբերդ, այժմ Զուանշիր անունները»:

Ղ. Ալիշանը Մեծկունեաց գավառ է անվանում, որին հյուսիսից մոտ է Ականա քաղաքը՝ Թարթառի ափին[1]:

Ս. Երեմյանը փորձել է գավառը տեղադրել Իջևանի տարածքում[2], ինչի հետ իրավացիորեն համաձայն չէ Բ. Հարությունյանը:

Հ. Ոսկյանը Մեծկողմանք գավառի վանքեր է համարում Գյուլիստանի Ամենափրկիչ վանքը, Երից մանկանց վանքը[3]:

Թ. Մինասյանն այս գավառի գրչության կենտրոններից հիշատակում է առաջնորդանիստ Խադավանքը[4], իսկ գավառը նույնացնում Զրաբերդի հետ, նրա սահմանները նշելով ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Մռավի լեռնաշղթայի, Դաշտաբերանի, Թարթառ գետի և նրա Թրղի վտակի ձախ և Կուրակ գետակի աջ ափերը[5]:

Այսպիսով՝ Մեծկողմանք գավառի սահմանները տարածվում են Թարթառ գետի վերին հոսանքի ձախափնյա ավազանում՝ մինչև Մռավի լեռնաշղթայի լեռնագագաթները: Գավառը սահմանակից է հյուսիսում ու արևելքում՝ Ուտիք նահանգին, հարավում՝ Վայկունիքին ու Մեծառանքին, արևմուտքում՝ Կողթին:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Հաթերք, Ակնաբերդ, Գյուլիստան, Թալիշ, Տոնաշեն, Մատաղիս, Չափար, Զագլիկ, Զարդախաչ, Դադիվանք գյուղերը և այլն[6]:

6. Հարձլանքն Արցախ աշխարհի հարավ-արևելյան սահմանն է՝ մոտավորապես Վարանդայի գավառը[7]:

Ղ. Ալիշանը Արցախի հարավում՝ Դիզակում է տեղադրում Մուխանք, Հարձլանք, Պիանք և Սիսական Կոտակ գավառները. «Այս նոր գավառի մեջ են մտնում հին գավառներ **Մուխանքը**, այն է՝ **Մխանց տոհմը**, **Հարժլանը**, **Պիանքը** եւ **Քոտակը**, որոնցից միայն առաջինն է հիշվում պատմության մեջ եւ բաղանիկեցիների արշավանքում, որպես Պարզկանքի հարավում եւ նույն Ուտի գավառի վերջում գտնվող, որովհետեւ նրանից հետո ասպատակված գավառների մեջ վերջինս սա է համարվում: Մյուսների անունները ամենեւին չեն նշվում, որի պատճառով դրանց դիրքը, սահմանները եւ պատմական դեպքերը հայտնի չեն»[8]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ «Դիզափայտ և Քիրս լեռնաշղթայի գագաթագծի շարունակության, Շուշիից Գորիս տանող մեծ ճանապարհի և Հակարի գետի միջև ընկած տարածքը անվանվել է Հարձլանք, Զառիստ, Հաչի Սամլու, Հաճիլար»[9], որը հարավային գավառներից է:

---

[1] Բարխուդարեանց Մ., «Արցախ»,, էջ 24:
[2] Ալիշան Ղ., «Տեղեկագիր Հայոց Մեծաց», էջ 89:
[3] Ոսկեան Հ., «Արցախի վանքերը», էջ 78:
[4] Նույն տեղում, էջ 124-127:
[5] Մինասյան Թ., «Արցախի գրչության կենտրոնները», Երևան,2015, էջ 27:
[6] Նույն տեղում, էջ 52:
[7] Հիշատակված գյուղերից Թալիշը, Մատաղիսը, Դադիվանքը հանձնվել են Ադրբեջանին 2020թ., իսկ Գյուլիստանն ավելի վաղ:
[8] Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, էջ 114:
[9] Ալիշան Ղ., «Արցախ», էջ160:

Քանի որ գավառի մասին տեղեկություններ չեն պահպանվել, ուստի անհնար է դարձել որոշակիացնել նրա տեղադրությունը: Ուսումնասիրողներն ունեն տարբեր մոտեցումներ: Բ. Հարությունյանը հակված է գավառը տեղադրելու Խոջաչայի շրջակայքում[1], իսկ Ս. Երեմյանը՝ Քյոնդալան չայի (Դողագետ, Տողագետ) հարավային եզրին[2], որն Արաքսի ձախակողմյան վտակ է:

Ինչպես տեսնում ենք, Մ. Բարխուդարյանցի և արդի պատմաբանների մոտեցումները չեն համապատասխանում:

Ամեն դեպքում, Հարճլանք գավառը պետք է տեղադրել Արցախի հարավում, ինչը հաստատում է նաև Ղ. Ալիշանը. «ստորին մասն Արցախ աշխարհի, յորում թուին լինել գաւառքն հին Պարզկանք, Պիանք, Հարժլանք, և Մուխանք ‘ի հարաւոյ, յորմէ թերևս ծագեալ Մուղանն անուան, որով կոչի դաշտն մեծ կամ անապատն ‘ի հարաւոյ և յելից Երասխայ»[3]: Սա պարզ է նաև «Աշխարհացոյց»-ի թվարկումից, որտեղ այս գավառները նշվում են հերթականությամբ՝ Հարճլանք, Մուխանք, Պիանք, Պարզկանք, քանի որ այս գավառները հարևան են իրար:

Մեր կարծիքով, Հարճլանքը Վարադայի (Ֆիզուլի) գավառն է, որի սահմանները հասնում են մինչև Տողագետի ստորին հոսանքներ և Արաքս գետ: Գավառը սահմանակից է հյուսիսից՝ Մուխանքին, արևելքից՝ Ուտիք նահանգին, արևմուտքից՝ Պիանքին, Պազկանքին, Մյուս Հաբանդին, հարավում՝ Արաքս գետին:

Գավառի տարածքի մեջ են այժմյան Ձիվանի գյուղը և Վարանդան (Ֆիզուլի)[4]:

7. Մուխանք գավառը Արաքսի ձախափնյա հատվածում Կարկառ գետի ստորին հոսանքի ավազանն է, Մխանց նախարարական տոհմի տիրույթը, որը ձգվում էր Ակնայից մինչև Արաքսի հովիտ՝ ներառելով Մուղանի դաշտավայրը[5]:

Մովսես Կաղանկատվացին այս գավառի մասին ունի հետևյալ վկայությունը. ***«ի Մխանց տոհմին ի վայրս Կաղսետու»***[6] «Մխանց տոհմին պատկանող Կաղսետ կոչված վայրում»[7]: Հիշատակված Կաղսետ վայրի մասին ոչ մի տեղեկություն չկա տեղանունների բառարանում: Մովսես Դասխուրանցին ևս գավառն անվանում է Մխանք:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ գավառը «ընկած է Երասխի ձախ ափի, Վարդանակերտ գավառի և դաշտաբերանի տարածութեան մեջ, ստացած է Մուխանք, Մուղան, այժմ Միլին դաշտ անունները»[8]:

Ն. Ադոնցը գրում է, որ Մուխանքը «ծագում է Կասպից ծովի ափերին ապրող ցեղերից մեկի» անունից:

Ուսումնասիրողները Մուխանք գավառի տեղորոշման հետ կապված տարաձայնություններ չունեն:

Այսպիսով, Մուխանք գավառը տարածվում է Կարկառ գետի ստորին հոսանքի ավազանում և տարածվում է մինչև Մարտունի քաղաքից հարավ՝ ներառելով Մոնթեի

---

[1] Բարխուդարեանց Մ., «Արցախ», էջ 25-26:
[2] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 78:
[3] Ալիշան Ղ., Տեղեկագիր Հայոց Մեծաց, էջ 90:
[4] Այս գավառն ամբողջությամբ հանձնվել է Ադրբեջանին:
[5] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.1, էջ 885:
[6] Մատենագիրք Հայոց, հտ., ԺԵ էջ 165:
[7] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 90:
[8] Նույն տեղում, էջ 256:

լեռները. գավառը արևմուտքում սահմանակից է Մյուս Հաբանդին, հարավում՝ Հարճ-լանքին, արևելքում և հյուսիսում՝ Ուտիք նահանգին:

Այս գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Ակնա քաղաքը[1], Մարտունի քաղաքը, Ճարտարը, Աշան, Բերդաշեն, Խնուշինակ գյուղերն և Գիշին, որն եղել է գավառի կենտրոնն և այլն:

8. Պիանք գավառի տեղադրությունը պարզված չէ, ենթադրաբար այն համապատասխանում է Զեբրայիլի շրջանին, որը գտնվում է Արաքսի ձախ կողմում, թեև կարծիք կա, որ գավառը տարածվում է Խաչեն և Կարկառ գետերի միջև[2]:

Ղ. Ալիշանի համար ևս գավառի սահմաններն անորոշ են. «**Պիանք**, որը վատիկանյան օրինակը **Ապիանդ** է գրում, սրա երեք կողմերը անհայտ են, թվում է, որ ընկած պետք է լինի այժմյան Շուշիի, Սյունիի եւ Երասխի միջեւ»[3]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ «Գաւառն, որ ընկած է Երասխի և Ղուրու չայ գետակի ձախ ափերի, դաշտաբերանի և Մուխանք գաւառի սահմանի մէջ, կոչուած է Պիանք, այժմ Զաբրայէլի գաւառ»[4]:

Ղուրուչայ գետակը կազմվում է Թաղլար և Դողա վտակների միախառնվելուց, հոսում է Իշխանասարի ստորոտով, որը վերին հոսանքում կոչվում է Իշխանագետ, Ֆիզուլիի շրջանում միանում է Արաքսին:

Պիանքը «Ճիպրայիլ»-ն է համարել նաև Համազասպ Ոսկյանը[5]՝ օգտվելով Մակար Բարխուդարյանցի գրքից:

Ս. Երեմյանը գավառը տեղադրում է Բայան գյուղի շրջակայքում[6], որը գտնվում է Վարդաշենի շրջանում: Ս. Երեմյանի տեսակետն ընդունելի է համարել Բ. Հարությունյանը, սակայն չի բացառել «նրա տեղադրությունը Մուխանքի հարավակողմում»[7]:

Պիանք գավառում է գտնվել Պապուն քաղաքը, որն ավերակ է:

Մեր կարծիքով, Պիանք գավառը պետք է տեղադրել Արաքսի դաշտաբերանի ու Հարճլանք գավառի միջակա տարածքում, որն այժմյան Զաբրայիլն է: Գավառը սահմանակից է արևելքից Հարճլանքին, հյուսիսից՝ Պազկանքին, արևմուտքից՝ Սիսական Ոստանին, հարավից՝ Արաքս գետին:

Գավառի տարածքի մեջ են այժմյան Զրական (Զաբրայիլ) քաղաքը, Առաքել, Բանաձոր, Նոր շեն գյուղերը և այլն[8]:

9. Պանծկանք գավառի տեղադրությունը ևս պարզված չէ, ոմանք նույնացնում են Դիզակի, ոմանք՝ Վարանդայի հետ[9]:

Մովսես Կաղանկատվացին գավառն անվանել է Պազկանք. ***«...մեծագոյն աշխարհ մի Արցախայ՝ Պազկանք անուն»***[10], որը Վ. Առաքելյանը թարգմանել է Պարսա-

---

[1] Ակնա քաղաքն Աղդամն է, որն այժմ հանձնված է Ադրբեջանին:

[2] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.4, էջ 114:

[3] Ալիշան Ղ. «Արցախ», էջ 92:

[4] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 22:

[5] Ոսկեան Հ., «Արցախի վանքերը», էջ 1:

[6] Երեմյան Ս.,նշվ. աշխ. էջ 77:

[7] Հարությունյան Բ., նշվ. աշխ էջ 79:

[8] Այս գավառն ամբողջությամբ հանձնված է Ադրբեջանին:

[9] Հակոբյան Թ., Մելիք Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ.4, էջ 314:

[10] Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 113:

կանք՝ ծանոթագրելով. «Պազկանք, գոյություն ունի նաև Պարսկանք ձևը: Այս գավառը, ըստ Մ. Բարխուդարյանի, ընկած է «Երասխ գետի ձախ ափին՝ Հադրութի և Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագծի մեջ»[1]:

Ղ. Ալիշանը սահմանակից է համարում Մյուս Հաբանդին[2] և Մեծիրանքին[3]. «Պատմիչները այս գավառում ոչ մի շեն կամ վայր չեն նշում, որի հետեւանքով բացի Ամարասի հետ սահմանակցությունից, հնարավոր չէ այն քննել հանգամանորեն: Թվում է, որ սա ընկած էր Գարգարի ձորահովտում, սկսած նրա ակունքից վերջացրած Գարգարացիների դաշտաբերանով, որտեղ եւ մենք ենք հատում վիճակիս աշխարհագրության սահմանը: Հարավային կողմից իր մեջ առնելով արեւելյան վտակների բոլոր հովիտները՝ հասնում է մինչեւ գետերի ջրբաժանը, որոնք հարավից հոսում են դեպի Երասխ»[4]:

Մ. Բարխուդարյանցը կարծում է, որ գավառն «ընկած է Երասխ գետի ձախ և Ղուրուչայի աջ ափերի, Հադրութի և Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագծի մէջ, ստացած է Պազկանք, Պանծկանք, Դիզակ, այժմ Ձաբրայէլ անունները»[5]:

Մ. Բարխուդարյանցը փորձել է ավելի հստակեցնել գավառի սահմանները՝ գրելով. «Գաւառիս հարաւային սահմաներն են Երասխ գետն, արևելեանն՝ Պիան, հիւսիսայինն՝ Վարանդայ և արևմտեանն՝ Բերդաձոր գաւառների սահմաններն»[6]:

Ս. Երեմյանը փորձում է տեղադրել Վարանդայի գավառում[7], իսկ Բ. Հարությունյանը հակված է գավառը տեղադրել «Մուխանքից հարավ-արևելք ընկած շրջանում, որը հարավից եզերվում է Երասխ գետով, որի հակառակ ափին պետք է գտնվեր Վարդանակերտ քաղաքը»[8]:

Ըստ Հ. Ոսկյանցի Պազկանք գավառում է գտնվում Գտչավանքը[9], Դիզափայտի կամ Կատարո վանքը[10] և այլն:

Արցախի գրչության կենտրոններին նվիրված ուսումնասիրության մեջ Թամարա Մինասյանը Գտչավանքին անդրադառնալիս որոշակի նշել է Պարզկանք գավառի սահմանները. «Արևելքում նրա սահմանները ձգվում էին մինչև Մուղանի դաշտ, հյուսիսում՝ Քյոնդալան գետի ձախ ափը, արևմուտքում հասնում Քիրսի լեռնաշղթային և նրանից դեպի Երասխի հովիտը ձգվող բարձրություններին, հարավում՝ Երասխ գետին»[11]:

Ղ. Ինճիճյանը կարծում է, թե Պազկանք գավառի աղճատված անվամբ ***Պայիլ-զան*** կամ ***Պէյլէզան*** գյուղն է, «ոչ այնչափ հեռի յերասխայ և յորոտն վտակէ, որ թերևս է սոյն այս անուն աղճատեալ»[12]: Այս տեսակետն ընդունելի չէ, հիշատակվածը Բայլական քաղաքն է, որ գտնվում է Կուր և Երասխ գետերի միախառնման շրջանում:

---

[1] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 279-280:
[2] Տե՛ս Ալիշան Ղ., Արցախ, էջ 92:
[3] Նույն տեղում էջ 129:
[4] Նույն տեղում էջ 154:
[5] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 21:
[6] Նույն տեղում էջ 62:
[7] Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 77:
[8] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 79:
[9] Տե՛ս Ոսկեան **Հ.**, Արցախի վանքերը, էջ 11-16:
[10] Նույն տեղում, էջ 16-18:
[11] Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, էջ 19:
[12] Ինճիճեան Ղ., Ստորոգութիւն հին Հայաստանեայց, էջ 109:

Պազկանք բառը կարող է կապվել Արցախյան լեռնաշղթայի լեռնաբազուկների հետ, ինչը նկատել է նաև Մ. Բարխուդարյանցը. «Աւելի լաւ էր Բազկանք անուանել վերջին գաւառս, վասն զի գաւառս ամբողջապէս բաղկացած է լեռնաբազուկներից, որք թեքուած են դէպի Երասխի ձախ ափն»[1]:

Մեր կարծիքով, Պազկանքը Իշխանագետի աջ ափից մինչև Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագիծն ընկած տարածքն է, որը սահմանակից է արևելքից Հարճլանքին, հյուսիսից՝ Մյուս Հաբանդին, արևմուտքից՝ Բերձորին, հարավից՝ Պիանքին:

Գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Հադրութ քաղաքը, Տումի, Տող, Թաղուտ, Մարիամաձոր, Քյուրաթաղ, Ակնաղբյուր, Ծաղկավանք, Վանք գյուղերը և այլն[2]:

10. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում Սիսական Ոստան գավառը նույնացվում է Մյուս Հաբանդ գավառին[3],

ինչն ընդունելի չէ:

Թերևս այս գավառն է, որ Սիսական ձևով հիշատակել է Մովսես Դասխուրանցին. ***«…Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ»***[4] / *«…Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ-Ամարաս, Պազկանք, Մխանք և Տրի գավառներին»*[5]:

Ղ. Ալիշանի համար հստակ չէ այս գավառի սահմանները. «**Սիսական ոստան**, նույն **Սիսան ձորը**. սկսվում է Վայկունիքի ելքից եւ, ինչպես ինձ թվում է, ընկած է Կուրակի եւ Կուրանի միջեւ»[6], ապա փորձել է տեղորոշել, թե գավառը «տեղադրված է արեւմուտքից Մեծկողմանքի, իսկ արեւելքից Վայկունիքի միջեւ, եւ որի միջով երեք վտակների միավորումից հետո սահմանով իջնում է Թարթառ գետը դեպի հարավ մոտ 12 մղոն, հետո թեքվում դեպի արեւելք, պետք է Արցախի **Սիսական** գավառը լինի, նույն ինքը **Սիսական ոստանը եւ Սիսական գավառը**, որը այդպես է կոչվում Սյունիքին մոտ լինելու պատճառով: Նրան հարավից սահմանակից է Խաչեն գետի սկիզբը, որի հարավում էլ գտնվում է Հաբանդ գավառը»[7]:

Մ. Բարխուդարյանցը Սիսական-Ոստան գավառը համարելով Հարավային կամ Վերին գավառ, իսկ Սիսական Ոստակը՝ Լեռնային կամ Միջին Արցախի գավառ, առաջինի մասին գրում է. «Գաւառն, որ ընկած է Մռաւ սարի հարաւահայեաց լանջերի, Ռմբասարի գագաթնագծի, Վակունիք և Ոստակ գաւառների սահմանների մէջ, ստացել է Սիսական-Ոստան, Սիսական, Ծար, Զար, այժմ Զար գաւառ»[8]:

Մենք կարծում ենք, Սիսական Ոստանը ոչ թե Ծարն է, այլ հենց Սիսական Ոստակը, որը սակայն ոչ թե Թարթառի ձախափնյա հատվածում է, այլ սահմանակից է Մյուս Հաբանդ գավառին, ինչպես նկատել են ուսումնասիրողները: Իսկ Ծարը համապատասխանում է Վայկունիքի տարածքին:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ Լեռնային գավառ **Սիսական Ոստակը** կամ **Ոստոստակը** գտնվել է Թարթառի ձախ ափին. «Գավառակն, որ ընկած է Թարթառի և Եանշաղի

---

[1] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 1:

[2] Հիշատակված բոլոր բնակավայրերը 2020թ. հանձնվել են Ադրբեջանին:

[3] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, էջ 844, հտ. 4, էջ 614:

[4] Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ, էջ 404:

[5] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 256:

[6] Ալիշան Ղ., Արցախ, 92:

[7] Նույն տեղում էջ 116:

[8] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 26:

ձախ և Թրղու ափ ափերի մեջ, ստացած է Ըստիսական, Ըռստակ, Հաթերք անունները»[1]: Հետևելով Մ. Բարխուդարյանցին՝ Հ. Ոսկյանը Ըստիսական գավառի վանքեր է համարել Դադիվանքը[2], Չարեքդարի վանքը[3]:

Ս. Երեմյանը Սիսական-ի-Ոստանը նույնացնում է Մյուս Հաբանդ գավառի հետ[4], Բ. Հարությունյանը ձեռագրական տարընթերցվածների համեմատության արդյունքում Սիսական Ոստանը նույնացնում է Սիսական ի Կոտակ և Սիսական Ռոտաստակ անվանաձևերի հետ[5]՝ այն տեղադրելով Մյուս Հաբանդից դեպի հարավ-արևելք. «Սիսական-ի-Ոստանը տարածվել է մինչև Երասխ գետը՝ հյուսիսում սահմանակցելով Մյուս Հաբանդին»[6]:

Սիսական ի Ոստան կամ Սիսական ի Կոտակ բառաձևերի քննությունն առիթ է տալիս ենթադրելու, որ Սիսականից դեպի Ոստան, այսինքն՝ մայրաքաղաք գնացող ճանապարհի վրա գտնվող գավառի մասին է խոսքը, իսկ Սիսականից դեպի Խոսրով Կոտակի մայրաքաղաք Դվին գնացող ճանապարհն անցել է Արաքսի ափով՝ Նախիջևանով: Ավելի հավանական է Սիսական ի Կոտակի մեկնությունը՝ Սյունիքից դեպի Փոքր Սյունիք, քանի որ Խորենացին է Արցախն անվանել Փոքր Սյունիք: Այս դեպքում ***կոտակ*** բառը, որ ***կարճահասակ*** է նշանակում, ***փոքր*** իմաստով պիտի ընկալվի: Բոլոր դեպքերում Սիսական ի Ոստան գավառի անվանաձևը հուշում է, որ գավառը չի կարող Թարթառի ափամերձ հատվածում լինել:

«Աշխարհացոյց»-ում **Սիսական Ոստան** անվանված գավառը, որ **«զՍիսականիս, զԿոտակ»** և **«Սիսականք, Քուակք»** սխալ կետադրությամբ է ներկայացվել «Մատենագիրք հայոց»-ում, առաջարկում ենք սրբագրել, քանի որ հիշյալ գավառները՝ **Սիսական Ոստան, Սիսական Կոտակ, Սիսական Քուակք և Սիսական Ռոտաստակ** նույն գավառն են, որը տարածվել է Դիզափայտից դեպի հարավ-արևմուտք՝ մինչև Արաքս, և անընդունելի է այս գավառը Մյուս Հաբանդի հետ նույնացնելը, ինչը սխալմամբ արվել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում:

Մեր կարծիքով, Սիսական Ոստան գավառը տարածվում է Դիզափայտ լեռնագագաթից դեպի հարավ-արևմուտք՝ մինչև Արաքս գետը, արևմուտքում՝ մինչև Հագարի գետը, իսկ հյուսիսում՝ Ամուտեղ լեռը: Գավառը սահմանակից է հյուսիսից՝ Բերձորին, արևելքից՝ Պիանքին, հարավից՝ Արաքս գետին, արևմուտքից՝ Սյունիքի Հաբանդ գավառին, որի սահմանը Հագարի գետն է:

Գավառի տարածքի մեջ են մտնում այժմյան Խծաբերդ, Հին Թաղլար, Խանձաձոր, Արևշատ, Ծամձոր, Քարագլուխ, Ցոր, Աղաձոր, Արծվաշեն, Իշխանաձոր գյուղերը և այլն[7]:

11. Քուստիփառնեսը Փառիսոս գավառն է, որ գտնվում է Կուրի աջակողմյան Շամխոր և Գարդման վտակների, Սևանա լեռնաշղթայի, Տավուշ գետի միջակայքում[8]:

Ղ. Ալիշանը տեղադրում է Մեծիրանքի և Մեծկողմանքի արևելյան կողմում[1]:

---

[1] Նույն տեղում, էջ 24:
[2] Տե՛ս Ոսկեան Հ., Արցախի վանքերը, էջ 95-112:
[3] Նույն տեղում, էջ 112-114:
[4] Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 70:
[5] Տե՛ս Հարությունյան Բ., նշվ. աշխ, էջ 62:
[6] Նույն տեղում էջ 80:
[7] Գավառն ամբողջությամբ հանձնվել է Ադրբեջանին:
[8] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 5, էջ 219, էջ 450:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ գավառը «ընկած է Շամքոր գետակի միջին օժանդակի և Գեղամայ լեռնաշղթայի գագաթնագծի շարունակության և Տաւուշի գետակի հարաւ-արևելեան օժանդակի (Ախնջի) ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Փառնէս, Փառիս, Փառիսոս, այժմ Շամշատին անունները»[2]: Քուստիփառնեսը եղել է մի գավառ, սակայն Մ. Բարխուդարյանցն այն առանձնացրել է Փառնեսից, ուստի Տավուշ գետի հարավային Ախնջի օժանդակի, Աղստևի և Գեղամա լեռնաշղթայի ու դաշտաբերանի միջև ընկած հատվածը, որ անվանվել է Քուստի, Քաւս, որ անվանվել է նաև Ղազախ[3], պետք է միացյալ լինի Փառնեսի հետ՝ որպես Քուստիփառնես գավառ:

Ս. Երեմյանը Քուստի և Փառնես գավառները դիտել է որպես առանձին գավառներ[4], իսկ Բ. Հարությունյանը դրանք համարելով մեկ գավառ՝ Քուստի-Փառնես, տեղադրում է Գարդմանի հարավակողմում:

Փառիսոս գավառում է գտնվում Երգեվանքը[5], Փառիսոսի վանքը[6] և այլն:

Ըստ Մեսրոպյան Գահնամակի՝ Արշակունի թագավորի խնջույքի սեղանին՝ 71-րդ բարձին, կարող էր բազմել Փառաճունի կամ Ռաճունի ազնվական տան իշխանը, որ այս գավառի իշխանն էր[7]:

Գավառը տարածվում է Գեղամա լեռներից հյուսիս, արևելքից սահմանակից է Կողթին, հյուսիսից՝ Ուտիք նահանգին, հարավից՝ Սյունիքին:

12. Կողթ գավառը համապատասխանում է Շամշադինի հետ, որ հնում եղել է Արցախ աշխարհի գավառներից մեկը[8]:

Փավստոսը հիշատակում է Կողթ գավառը Ուտիքի գավառների՝ Ուտիի, Շակաշենի, Գարդմանաձորի կողքին, որից ևս ակնհայտ է, որ այս գավառը գտնվել է Արցախի հյուսիսային հատվածում. ***«Առնէր պատերազմ ընդ երկիրն Աղուանից. հարկանէր զնոսա ի հարուածս անհնարինս: Եւ թափէր ի նոցանէ բազում գաւառս, զոր հատեալ էր նոցա ի նոցանէն. զՈւտի, զՇակաշէն եւ զձորն Գարդմանայ, զԿողթ և այլ որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք: Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն լեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն իւրեանց սահման արարեալ կացուցանէին. և ի գլխաւորացն բազումս սպանանէին. և զմնացորդսն ի հարկի կացուցանէին, և պանդանդս ի նոցանէ առնուին»*** | *«Պատերազմում էր նաև Աղվանից երկրի հետ և նրանց սոսկալի ջարդ էր տալիս: Նրանցից ետ էր խլում շատ գավառներ, որ նրանք գրավել էին – Ուտին Շակաշենը, Գարդմանաձորը, Կողթը և սրանց շուրջ եղած սահմանակից շատ գավառներ: Կուր գետը սահման դարձրեց (մեր) աշխարհի և Աղվանքի մեջ՝ ինչպես*

---

[1] Տե՛ս Ալիշան Ղ., Արցախ, 92:
[2] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 24-25:
[3] Նույն տեղում, էջ 25:
[4] Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 88, էջ 90:
[5] Տե՛ս Ոսկեան Հ., Արցախի վանքերը, էջ 145-146:
[6] Նույն տեղում, էջ 176-177:
[7] Տե՛ս Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները Վանո Եղիազարյանի, էջ 155:
[8] Տե՛ս Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, էջ 198:

որ առաջ էր: Գլխավորներից շատերին սպանում էին, մնացորդներին հարկի տակի էին դնում և նրանցից պատանդներ էին առնում»[1]*:*

Ղ. Ալիշանը գավառը տեղադրում է Ուտիքում. «**Կողթ** կամ ըստ վատիկանյան օրինակի՝ **Կոխտ**, **Կողդք**, որն ընկնում է Գեղամա ծովի ելքի, Շամքոր եւ Խոչքար գետերի ակունքների միջեւ, Այրում գավառում, որը տեղադրեցինք Ուտիքում»[2]:

Ըստ Մ. Բարխուդարյանցի՝ այս գավառն «ընկած է Շամքոր գետակի ձախ, Կուր և Աղստև գետերի աջ ափերի և դաշտաբերանի մէջ, ստացած է Կողթ, Շամքոր և Ձակամ, այժմ Շամշադին և Ղազախ անունները»[3]:

Վ. Առաքելյանը Կողթը համարում է Արցախի 14-րդ գավառը, որը նույնացնում է Դաստափուրի շրջանին[4]:

Բ. Հարությունյանը Քուստի-Փառնես գավառից դեպի արևելք է տեղադրում Կողթ գավառը, որտեղ «նշանավոր է եղել *քարախունկի* կամ *պաղլեղի* հանքը ուշ ժամանակների *Փիփ* կամ *Ջազլիկ* գյուղի մոտ»[5]:

Այս գավառում է գտնվում Աղաջղալա վանքը, համանուն ավերակ դղյակը՝ Խաղխաղ քաղաքի մոտ:

Գավառում են գտվել Փիփը, Բանանցը, Քարհատը, որն այժմյան Դաշքեսան քաղաքն է, իսկ գավառը՝ Ադրբեջանի Դաշքեսանի շրջանը:

Գավառը սահմանակից է արևելքից՝ Մեծկողմանքին, հյուսիսից՝ Ուտիք նահանգին, արևմուտքից՝ Քուստիփառնեսին և Սյունիքի Սոտք գավառին, հարավից՝ Վայկունիքին:

Ամփոփելով Արցախի 12 գավառների մասին մեր դիտարկումները՝ նշենք, որ այս գավառների անվանումները հայկական ծագում ունեն: Տեղին է Աս. Մնացականյանի նկատառումը, որ հիշատակելով Մեծ Իրանք, Մեծ Կողմանք, Մխանք, Վայկունիք, Բերձոր գավառների անունները և մի քանի այլ անձնանուններ՝ գրում է. «Անհրաժեշտ էլ չէ, որ բացատրվի այս տեղանունների ու անձնանունների հայկական ծագումը, որովհետև նրանք ոչ մի այլ լեզվով չեն կարող բացատրվել, եթե զանց առնվի հայերենը»[6]:

Եզրակացություն

1. Ուսումնասիրելով Արցախի գավառների խնդիրը՝ գալիս ենք այն եզրակացության, որ այդ «Աշխարհացոյց»-ում Արցախի գավառների թիվը 12 է, թեև սխալմամբ հիշատակվել է 13 անուն, իսկ ուսումնասիրողները սխալմամբ թվել են 14[7], 15[8], 24[9] գավառներ, ինչը ևս անընդունելի է:

2. Ս. Երեմյանը փորձել է Մյուս Հաբանդ գավառը նույնացնել Սիսական ի Ոստան կամ Սիսական ի Կոտակ գավառի հետ, ինչն իրավացիորեն չի ընդունել Բ. Հա-

---

[1]Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 120-121:
[2] Ղ. Ալիշան, Արցախ, 92:
[3] Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 21:
[4] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, էջ 285:
[5] Հարությունյան Բ., նշվ. աշխ., էջ 81:
[6] Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966, էջ 46:
[7] Տե՛ս Ինճիճեան Ղ., Ստորոգութիւն հին Հայաստանեայց, էջ 105-106:
[8] Տե՛ս Կարապետյան Ս., Արցախ, քարտեզագիրք, էջ 1:
[9] Տե՛ս Բարխուդարեանց Մ., Արցախ, էջ 2:

ությունյանը, և վերջինս Մյուս Հաբանդը տեղադրել է «Սյունիքի Հաբանդ գավառի հարևանությամբ՝ տարածելով այն մինչև Ամարասի կողմերը», ինչը ևս ընդունելի չէ, քանի որ Սյունիքի Հաբանդ գավառին սահմանակից է Բերձոր գավառը, որից անդին նոր միայն Մյուս Հաբանդ գավառն է, որի սահմանները տարածվում են Քիրսի լեռնաշղթայից մինչև Մուղանի դաշտի արևմտյան սահմանը՝ մինչև Ամարաս և Կարկառ գետի ողջ աջափնյակը՝ մինչև Ակնա քաղաք:

3. Բերձորը տարածվում է Արաքս և Աղավնո գետերի միջև՝ Քիրս և Դիզափայտ լեռների հարավային լանջերից մինչև Սյունիքի սահմանները՝ ըստ «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ի, որտեղ գավառը սխալմամբ նույնացվել է Ձաբրայիլի շրջանին, ապա անորոշ հղմամբ նույնացվել նաև Վերին Խաչենին: Ս. Երեմյանը և Բ. Հարությունյանը սխալմամբ այն տեղադրել են Թարթառի հովտում, մինչդեռ Բերձոր գավառի սահմանները տարածվում են Հագարի գետի միջին հոսանքի ձախափնյա հատվածում՝ մինչև Քիրսի լեռնագագաթ: Սա հաստատվում է նաև Կառնակաշ բերդի, Ուռեկանի և Հակարի գյուղերի Բերձորում գտնվելու փաստով: Գավառը արևմուտքում Հագարի գետով սահմանազատվում է Սյունիքի Հաբանդ գավառից, արևելքում սահմանակից է՝ Մյուս Հաբանդին ու Պազկանքին, հարավում՝ Սիսական Ոստանին, հյուսիսում՝ Վայկունիքին ու Մեծիրանքին:

4. «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում ավելացնել «Դոգլու» վտակի մասին տեղեկությունը. այն միանում է Հագար գետին մինչև Հարար օժանդակի միանալը՝ այժմյան Բերձոր քաղաքից դեպի Հարար ընկած հատվածում՝ սկիզբ առնելով Սուարասը գյուղի շրջակա լեռներից:

5. Հարձլանքը Վարադայի (Ֆիզուլի) գավառն է, որի սահմանները հասնում են մինչև Տողագետի ստորին հոսանքներ և Արաքս գետ: Գավառը հյուսիսից սահմանակից է Մուխանքին, արևելքից՝ Ուտիք նահանգին, արևմուտքից՝ Պիանքին, Պազկանքին, Մյուս Հաբանդին, հարավում՝ Արաքս գետին:

6. Պիանք գավառը պետք է տեղադրել Արաքսի դաշտաբերանի ու Հարձլանք գավառի միջակա տարածքում, որն այժմյան Ձաբրայիլն է: Գավառը արևելքից սահմանակից է Հարձլանքին, հյուսիսից՝ Պազկանքից, արևմուտքից՝ Սիսական Ոստանին, հարավից՝ Արաքս գետին:

7. Պազկանքը Իշխանագետի աջ ափից մինչև Դիզափայտի լեռնաշղթայի գագաթնագիծն ընկած տարածքն է, որը է արևելքից սահմանակից է Հարձլանքին, հյուսիսից՝ Մյուս Հաբանդին, արևմուտքից՝ Բերձորին, հարավից՝ Պիանքին:

8. «Աշխարհացոյց»-ում Սիսական Ոստան անվանված գավառը, որ «զՍիսականիս, զԿոտակ» և «Սիսականք, Քուակք» սխալ կետադրությամբ է ներկայացվել «Մատենագիրք հայոց»-ում, առաջարկում ենք սրբագրել, քանի որ հիշյալ գավառները՝ Սիսական Ոստան, Սիսական Կոտակ, Սիսական Քուակք և Սիսական Ռոտաստակ նույն գավառն են, և անընդունելի է այս գավառը Մյուս Հաբանդի հետ նույնացնելը, ինչը սխալմամբ արվել է «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան»-ում: Սիսական Ոստան գավառը տարածվում է Դիզափայտ լեռնագագաթից դեպի հարավ-արևմուտք՝ մինչև Արաքս գետը, արևմուտքում՝ մինչև Հագարի գետը, իսկ հյուսիսում՝ Ամուտեղ լեռը: Գավառը է հյուսիսից սահմանակից է Բերձորին, արևելքից՝ Պիանքին, հարավից՝ Արաքս գետին, արևմուտքից՝ Սյունիքի Հաբանդ գավառին, որի սահմանը Հագարի գետն է:



Արցախ նահանգի գավառների քարտեզի հեղինակ՝ Լեռնիկ Հակոբյան

Ժամանակակից քարտեզի վրա գծանշեց Արա Գրիգորյանը

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987:
2. Ալիշան Ղ., Արցախ, Երևան, 1993:
3. Ալիշան Ղ., Տեղեկագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1855:
4. Բարխուդարեանց Մ., Արցախ, Բագու, 1895:
5. Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963:
6. Ինճիճեան Ղ., Ստորոգութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822:
7. Կարապետյան Ս., Արցախի կամուրջները, Երևան, 2009:
8. Կարապետյան Ս., Արցախ, քարտեզագիրք, Երևան, 2016:
9. Հակոբեան Ա., Խաչէն-Խօխանաբերդ ամրոցը եւ նրա իշխանատոհմը Թ.-ԺԳ. դարերում, Հանդէս Ամսօրեայ, 2010, թիվ 1-12, էջ 71-171:
10. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 1, Երևան, 1986:
11. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Երևան, 1988:
12. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 3, Երևան, 1991:
13. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 4, Երևան, 1998:

14. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 5, Երևան, 2001:
15. Հարությունյան Բ., Հայոց Արեւելից կողմերի և Աղվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր, Հոդվածների ժողովածու, Երևան, 2016:
16. Հյուբշման Հ., Հին հայոց տեղւոյ անունները, Վիեննա, 1907:
17. Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
18. Մատենագիրք հայոց, հտ. Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003:
19. Մատենագիրք հայոց, հտ. ԺԵ., Երևան, 2011:
20. Մեսրոպ Վայոցձորեցի, Սուրբ Գրիգոր Լուսավորչի տոհմի մասին և սուրբ Ներսես հայոց հայրապետի պատմությունը, թարգմանությունը գրաբար բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վանո Եղիազարյանի, Երևան, 2015:
21. Մինասյան Թ., Արցախի գրչության կենտրոնները, Երևան, 2015:
22. Մկրտչյան Շ., Արցախ, պատմամշակութային համառոտ ակնարկ, Երևան, 1991:
23. Մնացականյան Աս., Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966:
24. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարագ Առաքելյանի, Երևան, 1969:
25. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981:
26. Ոսկեան Հ., Արցախի վանքերը, Վիեննա, 1953:
27. Պատկանեան Ք., Աշխարհացոյց է դարու, Ս. Պետերբուրգ, 1877:
28. Սարգսյան Ս., Արցախ, պատմաաշխարհագրական ճշգրտումներ, Երևան, 1996:
29. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994:
30. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, 1975:
31. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմանությունը և ծանոթագրությունները Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987:

REFERENCES

1. Adonc N., Hayastany Hustinianosi darashrganum, E., 1987:
2. Alishan X., Arcax, E., 1993:
3. Alishan X., Texekagir Hajoc Metsac, Venetik, 1855:
4. Barxudaryanc M., Arcax, Bagu, 1895:
5. Eremyan S., Hajastany yst «Ashxarhacujc»-i, E., 1963:
6. Inchichyan X., Storogtiun hin Hajastaneajc, Venetik, 1822:
7. Karapetyan S., Arcaxi kamyrgnery, E., 2009:
8. Karapetyan S., Arcax, qartezagirq, E., 2016:
9. Hakobyan A., Xachen-Xoxanaberd amrocy ev nra ishxanatohmy 9-13 darerum, Handes Amsorya, 2010, tiv 1-12, eg 71-171:
10. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barsexyan H., Hajastani ev harakic shrganneri texanunneri bararan, ht. 1, Ереван, 1986:
11. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barsexyan H., Hajastani ev harakic shrganneri texanunneri bararan, ht. 2, Ереван, 1988:
12. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barsexyan H., Hajastani ev harakic shrganneri texanunneri bararan, ht. 3, Ереван, 1991:

13. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barsexyan H., Hajastani ev harakic shrganneri texanunneri bararan, ht. 4, Ереван, 1998:
14. Hakobyan T., Meliq-Baxshyan St., Barsexyan H., Hajastani ev harakic shrganneri texanunneri bararan, ht. 5, Ереван., 2001:
15. Harutyunyan B., Hayoc Arevelic koxmeri ev Axvanqi patmutyan u patmakan ashxarhagrutyan harcer, Hodvacneri goxovacu, Ереван, 2016:
16. Hyubsman H., Hin hayoc texvo anunnery, Vienna, 1907:
17. Xanalanyan A., Avandapatym, Erevan, 1969:
18. Matenagirq Hayoc, ht. B, Antilias-Libanan, 2003:
19. Matenagirq Hayoc, ht. JE., Erevan, 2011:
20. Mesrop Vayocdzoreci, Surb Grigor Lusavorchi tohmi masin ev surb Nerses hayoc hajrapeti patmutyuny, targmanytyuny grabar bnagric, aragabany ev canotagrutyunnery Vano Eghiazaryani, Erevan, 2015:
21. Minasyan T., Arcaxi grchutyan kentronnery, Erevan, 2015:
22. Mkrtchyan Sh., Arcax, patmamshakutayin hamarot aknark, Erevan, 1991:
23. Mnacakanyan As., Axvanic ashxarhi grakanutyan harceri shurgy, Erevan, 1966:
24. Movses Kaxankatvaci, Patmutyun Axvanic ashxarhi, targmanutyuny, aragabany ev canotagrutyunnery Varag Araqelyani, Erevan, 1969:
25. Movses Xorenaci, Hayoc patmutyun, Erevan, 1981:
26. Voskean H., Arcaxi vanqery, Vienna, 1953:
27. Patkanean Q., Ashxarhacuyc 7 daru, S. Peterburg, 1877:
28. Sargsyan S., Arcax, patmaashxarhagrakan chshgrtumner, Erevan, 1996:
29. Ulubabyan B., Arcaxi patmutyuny skzbic minchev mer orery, Erevan, 1994:
30. Ulubabyan B., Xacheni ishxanutyuny X-XVI darerum, Erevan, 1975:
31. Pavstos Buzand, Hayoc patmutyun, targmanutyuny ev canotagrutyunnery St. Malxasyanci, Erevan, 1987:

РЕЗЮМЕ

Области Арцаха по «Ашхарацуйцу» и вопрос их местоположения

Егиазарян Вано

Ванадзорский государственный университет,
кафедра армянского языка и литературы,
доктор филологических наук, профессор

Акопян Лерник

Ванадзорский государственный университет,
кафедра армянского языка и литературы,
кандидат филологических наук

Предметом данной статьи являются провинции Арцаха и корректировка их географического положения. Цель статьи – максимально дополнить и обобщить сведения о провинциях Арцахского мира в «Словаре топонимов Армении и сопредельных регионов». Современность статьи заключается во введении точной информации в арменоведение, и на практике она послужит арцахистике. В статье использованы исторический метод и метод герменевтики. Научная новизна статьи заключается в уточнении количества провинций Арцаха путем правки оригинала «Ашхарацуиц», а также местонахождения 12 провинций и

исправлении сведений, представленных в «Словаре топонимов Армении и сопредельных регионов».

Ключевые слова: Провинции Арцаха, словарь топонимов Армении и сопредельных регионов, проверка местонахождения провинций, новые топонимы.

SUMMARY

The Regions of Artsakh by "Ashkharatsuits" and the Question of their Location

Yeghiazaryan Vano
Vanadzor State University,
Department of Armenian Language and Literature,
Doctor of Philology, Professor

Hakobyan Lernik
Vanadzor State University,
Department of Armenian Language and Literature,
Candidate of Philological Sciences

The subject of this article is the provinces of Artsakh and the adjustment of their geographical location. The purpose of the article is to supplement and summarize information about the provinces of the Artsakh world as much as possible in the "Dictionary of Toponyms of Armenia and neighboring Regions". The modernity of the article lies in the introduction of accurate information into Armenian studies, and in practice it will serve Artsakh studies. The article uses the historical method and the method of hermeneutics. The scientific novelty of the article consists in clarifying the number of provinces of Artsakh by editing the original "Ashkharatsuits", as well as the location of 12 provinces and correcting the information provided in the "Dictionary of Toponyms of Armenia and Neighboring Regions".

Key words: Provinces of Artsakh, dictionary of toponyms of Armenia and neighboring regions, Ashkharatsuits, checking the location of provinces, new toponyms.